«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հեքիաթի դերն ու նշանակությունը տարրական դպրոցում
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Լուսինե Աբրահամյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Մ. Մելքոնյանի անվան հ. 11 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……...3

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ……5

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԻ
ՆՊԱՏԱԿԱՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ….8

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ….……...……15

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեքիաթը բոլոր ժամանակներում ունեցել է իր ազդեցությունը սերունդների կրթության և դաստիարակության հարցերում: Հեքիաթի միջոցով երեխայի մեջ ձևավորվում է ամբողջական պատկեր աշխարհի մասին:Հեքիաթը բանահյուսական ժանր է՝ իր տեսակի մեջ յուրահատուկ: Այն չունի բովանդակային սահմանափակումներ, իր մեջ կարող է միահյուսել կախարդականը և միաժամանակ խրատականը, արկածայինն ու կենցաղայինը: Սովորաբար հեքիաթներում հերոսները և իրադարձությունները պատկերված են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ՝ հրաշապատում ձևերով:

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, երբ երեխան մուտք է գործում բոլորովին նոր, անծանոթ և անսովոր միջավայր: Նա ստիպված է լինում անհոգ մանկական բակային խաղը փոխարինել նոր դերով՝ պատասխանատվություն կրել սեփական արարքների համար: Երեխան, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է ու ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ: Այս տարիքային խմբում ուսուցման կազմակերպումը ունի որոշակի դժվարություններ, որոնք բխում են երեխաների տարիքային և հուզական առանձնահատկություններից:

Հեքիաթներն անգնահատելի ռեսուրս են տարրական դպրոցում երեխաների զարգացման համար: Նրանք ոչ միայն տրամադրում են գրավիչ պատմություններ, այլև կարևոր դեր են խաղում երիտասարդ սովորողների մտավոր, զգացմունքային և սոցիալական հմտությունների զարգացման գործում: Այս շարադրանքում մենք կանդրադառնանք, թե ինչպես են հեքիաթները նպաստում երեխաների զարգացմանը և ինչու դրանք պետք է լինեն տարրական դպրոցում ուսումնական գործընթացի կարևոր մասը:Ուսուցման արդյունավետ կազմակերպման և կրթական նպատակի իրականացման համար ուսուցչից պահանջվում է ուսուցման այնպիսի մեթոդների և միջոցների ընտրություն, որոնք թույլ կտան երեխաներին հասցնել դասի ասելիքը, կայուն գիտելիքներ ձևավորել նրանց մեջ: Այդպիսի մի կրթական գործիք է հեքիաթը:

Ժամանակակից տարրական դպրոցի խնդիրներից է ակտիվ, ստեղծագործող, ինքնուրույն մտածող, շփվող, բազմակողմանի զարգացած անձի ձևավորումը: Այս խնդիրների լուծման համար մեծ հնարավորություն է ընձեռնում հեքիաթի տեխնոլոգիան: Ուստի խիստ արդիական ենք համարում հետազոտել հեքիաթների՝ որպես մանկավարժական տեխնոլոգիայի կրթական և դաստիարակչական նշանակությունը:

Ներկայացվող հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հեքիաթների տեղն ու դերը, դաստիարակչական նշանակությունը մայրենիի դասապրոցեսում:

Դրված նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել հեքիաթների տեղն ու դերը երեխաների ընդհանուր զարգացման գործում:
- Ներկայացնել հեքիաթը՝ որպես ստեղծագործական կարողությունները խթանող մանկավարժական տեխնոլոգիա:
- Ուսումնասիրել հեքիաթների դերը՝ որպես մայրենիի դասապրոցեսի արդյունավետության բարձրացման միջոց:
- Վեր հանել երեխայի զարգացման գործում հեքիաթի դաստիարակչական նշանակությունը:

Աշխատանքում ընդհանրացված են հեքիաթների կրթական-դաստիարակչական նշանակությունը, կարևորությունը, մայրենիի դասաժամերին դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Հեքիաթների ասելիքը շատ խորն է, հաճախ միանգամից անընկալելի. դրանք ունեն խրատական, ուսուցողական, դաստիարակչական նշանակություն: Հեքիաթներին բնորոշ են ժողովրդական պատկերավոր արտահայտությունները, չափազանցությունները, իմաստալից խոսքերը: Հաճախ էլ իրար են խառնված իրականն ու երևակայականը:

Հ. Թումանյանը հեքիաթների մասին ասել է. «Հեքիաթները անդունդներ են՝ խորը, անծայր, անվերջ, հարուստ ու շքեղ աշխարհ: Հեքիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է…»:

ՀԵՔԻԱԹԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ շուրջը ամեն ինչ փոխվում է անվերահսկելի արագությամբ: Տեղեկատվական տեխնոլոգիաները կարճ ժամանակահատվածում ներդրվեցին մարդու գործունեության գրեթե բոլոր բնագավառներում. հիմա արդեն հորիզոնում արհեստական բանականությունն է, որը ևս շատ արագ է ներդրվում մեր կյանքում: Ժամանակի հետ փոխվում են նաև սովորողների և մանկավարժների հոգեհուզական դրսևորումները՝ պայմանավորված արտաքին գործոններով՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական կամ մշակութային իրադարձություններով [1]: Կրթական բարեփոխումների իրականացումը, որոնք սահմանում են կրթական նոր առաջնահերթություններ և պահանջներ, նույնպես պահանջում են մանկավարժության մեջ կիրառվող դասավանդման տեխնոլոգիաները հարմարեցնել ժամանակին և իրավիճակին, ցուցաբերել ուսուցման տեխնոլոգիաների և մեթոդների ընտրության ճկունություն:

Սոցիալական առումով ժամանակակից կրթությունը պետք է նպաստի դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Կրտսեր դպրոցական տարիքում կրթական այս նպատակի իրագործումը բավական բարդ է, քանի որ երեխաների տարիքային, հոգեհուզական և իմացական առանձնահատկությունները ուսուցիչներին մեթոդների և տեխնոլոգիաների ընտրության լայն հնարավորություն չեն տալիս: Լեզվական հմտությունների զարգացում.

Հեքիաթները հարստացնում են երեխաների բառապաշարը՝ օգնելով հասկանալ նոր բառեր և արտահայտություններ: Նրանք նաև զարգացնում են տեքստի ընկալման, սյուժեի վերլուծության և տեղեկատվության սինթեզի հմտություններ: Այս լեզվական հմտությունները շատ օգտակար կլինեն դպրոցում, քանի որ երեխան ավելի լավ կհասկանա և կյուրացնի ուսումնական նյութը:

Բարոյական արժեքների ձևավորում.

Հեքիաթները հաճախ ներառում են բարոյական դասեր և էթիկական չափանիշներ: Նրանք օգնում են երեխաներին զարգացնել բարոյականության և կարեկցանքի զգացում և հասկանալ ճիշտ և սխալ վարքի տարբերությունը: Սա

կարևոր է քաղաքացիական և բարոյապես պատասխանատու մարդ ստեղծելու համար: Ուսուցման պրակտիկայում հատկապես վերջին տասնամյակներին լայնորեն կիրառվում են այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են սովորողի ստեղծագործական մտածողության զարգացմանը, և այդ տեխնոլոգիաների հիմքում հիմնականում ընկած է խաղային մոդելավորումը, իսկ կրտսեր դպրոցում՝ հեքիաթի ուսուցումը: Խթանում է երևակայությունը և ստեղծագործությունը.

Հեքիաթները դուռ են բացում դեպի երևակայության և ֆանտազիայի աշխարհ: Նրանք օգնում են երեխաներին զարգացնել ստեղծագործ մտածողությունը, պատմություններ հորինելու և նրանց մտավոր պատկերները նկարելու կարողությունը: Սա նպաստում է ստեղծագործական ներուժի զարգացմանը, որը կարող է օգտակար լինել կյանքի տարբեր ոլորտներում:

Ծնողների հետ հաղորդակցության ամրապնդում.

Ծնողների կամ ուսուցիչների հետ պատմություններ կարդալը կարող է կարևոր պահ լինել, երբ մեծերի և երեխաների միջև հուզական կապեր են հաստատվում: Հեքիաթների սյուժեների քննարկումը նպաստում է մտերիմ հարաբերություններին և կարծիքների փոխանակմանը, ինչը դրականորեն է ազդում երեխայի զարգացման վրա:

Հեքիաթների դերը երեխաների զարգացման գործում բազմազան է՝ սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Բոլոր հեքիաթների մեջ չարի և բարու պայքար կա, և այդ պայքարը միշտ ավարտվում է բարի ուժերի հաղթանակով: Հեքիաթի միջոցով պետք է սերմանել բարին ու լուսավորը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն երեխաները, որոնց փոքր հասակից սկսած հեքիաթներ են պատմել, ավելի վաղ են սովորում իրենց մտքերը ճիշտ արտահայտել: Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական ներուժը: Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել: Կարևոր է նաև, որ հեքիաթները երեխայի խոսքը դարձնում են ավելի զգացմունքային և պատկերավոր: Ձևավորվում է հարցերը ճիշտ ձևակերպելու ունակություն:

Տարրական դպրոցում կարևոր խնդիր է անձի զարգացումը: Ժամանակակից երեխաները շատ տեղեկացված են, տեղեկատվական դաշտը բավական մեծ է, և երեխաների հետ աշխատանքում չի կարելի սահմանափակվել միայն մեկ բնագավառով կամ գիտելիքների մեկ ոլորտով. ինչքան շատ հնարավորություններ ենք տալիս երեխային օգտվելու տարբեր բնագավառներից, այնքան արդյունավետ է լինում մանկավարժական գործընթացը:

Երեխաներն ընդհանրապես իրականությունը պատկերավոր են ընկալում, իսկ հեքիաթները նպաստում են իրականության ճիշտ ընկալմանը: Երեխաները հեքիաթների միջոցով պատկերավոր են ընկալում նաև չարն ու բարին: Հեքիաթներում միշտ հաղթում է բարին, ինչը երեխային օգնում է հաղթահարելու կյանքի դժվարությունները՝ ենթագիտակցությունում ունենալով բարու հաղթանակի գաղափարը: Նույն հեքիաթը երեխային կարելի է մի քանի անգամ պատմել, որպեսզի լավ ընկալի հեքիաթի բուն ասելիքը: Հեքիաթներն իրապես իրենց ազդեցությունն են ունենում երեխաների անձի զարգացման և կայացման վրա [2]:

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՌՈՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Իրենց աշխատություններում հեքիաթի կարևորությանն անդրադարձել են Կ.Դ Ուշինսկին, Ա.Ս. Մակարենկոն, Վ.Ա. Սուխոմլինսկին: Ինչպես նշում է Վ.Ա. Սուխոմլինսկին. «Հեքիաթը ակտիվ գեղագիտական ստեղծագործություն է, այն իր մեջ ընդգրկում է երեխայի ողջ հոգևոր ոլորտները՝ երեխայի միտքը, զգացմունքները, երևակայությունը, կամքը: Այն արդեն իսկ սկսվում է պատմելուց, իսկ բարձրագույն փուլը բեմականացումն է» [3]:

Հայտնի հոգեբան Ա.Վ. Զապարոժեցը գրում է. «Հեքիաթը կարևորագույն դեր է խաղում երևակայության զարգացման գործում, ընդունակություն, առանց որի հնարավոր չէ երեխայի մտավոր գործունեությունը դպրոցում, ոչ էլ ցանկացած մեծի ստեղծագործական գործունեությունը» [4]:

Վ.Ա. Սուխոմլինսկին իր մանկավարժական գործունեության մեջ շատ կարևորում էր նաև երեխաների ինքուրույն գրած հեքիաթները: Վ.Ա. Սուխոմլինսկին ասում է, որ յուրաքանչյուր երեխա կարող է ստեղծագործել, ցանկացած երեխայի մեջ «քնած է բանաստեղծը, հեքիաթագիրը և անհրաժեշտ է միայն արթնացնել» [5]: Այստեղ շատ կարևոր է, որ ուսուցիչն ինքը նույնպես լինի ստեղծագործող և պայմաններ ստեղծի յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական կարողությունների բացահայտման և զարգացման համար:

Հեքիաթը մանկության այն վառ կանթեղներից է, որը լուսավորում է երեխայի աշխարհընկալումը: Միևնույն ժամանակ հեքիաթները հզոր կրթադաստիարակչական, հոգեթերապևտիկ ներուժ ունեն:Աշակերտների խոսքի զարգացման, ազատ և անկաշկանդ արտահայտվելու կարողությունների մշակման համար մայրենիի դասագրքում, աշխատանքային տետրերում կան բազմաթիվ առաջադրանքներ: Օրինակ՝ «Հորինի՞ր պատմություն նկարի շուրջ», «Պատմի՞ր, թե ինչ ես տեսնում նկարում», բնագրին կից նկարազարդման բովանդակության պատմում և համեմատում բնագրի հետ, տարբեր սխալներով լի նկարներում սխալների որոշում՝ ճշտի ներկայացում, նախապատրաստական զրույցների ընթացքում առաջացած հարցերի շուրջ դատողությունների շարադրում, ստեղծված խնդրահարույց իրավիճակներից դուրս գալու ելքերի որոնում, հեքիաթի

բեմականացում, հանելուկների հորինում և այլն: Ինչպես տեսնում ենք, ներկայացված ցանկում երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված առաջադրանքների մի ամբողջ խումբ կա: Այդ առաջադրանքները քայլ առ քայլ «բացում» են երեխայի լեզուն, նա ավելի ու ավելի համարձակ է դառնում իր մտքերն արտահայտելիս, կարողանում է դրանք ձևակերպել տրամաբանորեն, եզրակացություններ է անում, դառնում ինքնուրույն ու ինքնավստահ:

Մայրենիի դասերին կարելի է կիրառել հեքիաթի ուսուցման մի քանի ձևեր, որոնք շատ արդյունավետ են.

1. Խաղի, հեքիաթի միջոցով երեխային մատուցել դասը կամ ստուգել մատուցվածը:
2. Աշխատանքը դասի ժամանակ դառնում է կենդանի գործողություն, որը երեխայի մեջ մեծ հետաքրքրություն է առաջացնում:
3. Երեխան ոչ միայն տեսնում և ընդունում է, այլ նաև վերապրում է այդ ամենը:

Երեխաների խոսքի զարգացման համար դասագրքում նախատեսված են բազմաբնույթ միջոցներ: Բնագրի շուրջ տարվող աշխատանքները (կարդալ, պատմել, պատասխանել բնագրին կից հարցերին) խոսքի զարգացման համար հիանալի միջոցներ են: Մայրենիի դասագրքում կան նաև խոսքի, ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող այնպիսի առաջադրանքներ, որոնք տարվում են նկարների շուրջ: Օրինակ՝ «Այնպես նկարագրի՛ր, որ հասկանա» առաջադրանքը: Երեխան հայտնվում է խնդրահարույց իրավիճակում. պետք է որևէ մեկին բացատրի, թե ինչ է այս կամ այն առարկան, ընդ որում՝ պետք է այնպես բացատրի, որ դիմացինը հասկանա, թե ինչի մասին է խոսքը: Խնդիրը բարդանում է նրանով, որ ենթադրվում է, թե դիմացինը ընդհանրապես ոչինչ չգիտի այդ առարկայի մասին: Այս խաղ-առաջադրանքը իրականացնելիս երեխան կարող է օգտագործել ոչ միայն բառային նկարագրությունը, այլև դիմախաղն ու շարժուձևը՝ յուրօրինակ կերպով միայնակ բեմականացնելով իր բացատրությունը:

Երեխաների համար հեքիաթների առաջին և թերևս ամենակարևոր դերը երևակայությունն ու ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Հեքիաթները ստեղծում են հիանալի աշխարհներ՝ լի ֆանտազիայով և մոգությամբ,

որոնք թույլ են տալիս երեխաներին երազել և ստեղծել իրենց սեփական պատմությունները: Սա նպաստում է ստեղծագործական մտածողության ձևավորմանը, ինչպես նաև զարգացնում է տեղեկատվություն վերլուծելու և սինթեզելու կարողությունը:Երեխան, ըստ առարկայի հատկանիշների և գործառույթների, որքան հնարավոր է մանրամասնորեն բացատրում է դրա նշանակությունն ու արտաքին տեսքը, աշխատում է մտաբերել առարկայի էական հատկանիշները, ձգտում է, որ իր խոսքը հասկանալի լինի դիմացինին, հնարավորինս շատ մանրամասներ է հիշում, երբ դիմացինը չի հասկանում:

Հեքիաթի շուրջ աշխատանքներում շատ կարևոր են հերոսների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսի արարքի դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր ասելիքը: Հիմք ընդունելով կրթության բովանդակության բաղադրիչները՝ երեխայի ուշադրությունը պետք է հրավիրել որոշակի բառերի և արտահայտությունների վրա, քանի որ խոսքի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի հոգեվիճակը, նրա արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսի լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ և այլն:

Հեքիաթի ուսումնասիրումը բազմաբնույթ եղանակներով ու մեթոդական հնարներով զարգացնում է կրտսեր դպրոցականների երևակայությունը, կապակցված խոսքը և ստեղծագործական կարողությունները: Հեքիաթները խթանում են աշակերտների բանավոր խոսքի զարգացումը: Նրանք հաճույքով են մասնակցում այդ աշխատանքներին:

Ուսուցիչը պետք է հեքիաթի ուսուցման ժամանակ իր առջև դնել ներքոհիշյան նպատակները.

1. Զարգացնել աշակերտի ստեղծագործական ունակությունները:
2. Աշակերտների մեջ ձևավորել տեսական և գործնական այնպիսի հմտություններ, որոնք կօգնեն նրանց շարունակելու տանը հեքիաթի ընթերցումը:
3. Սովորեցնել աշխատել բնագրի հետ:

Մայրենիի դասագրքերում գերակշռում են կենդանական, իրապատում հեքիաթները: Արտադասարանական ընթերցանությամբ պետք է ուսումնասիրել նաև

հրաշապատում հեքիաթները: Հեքիաթի դասավանդումն իրականացվում է չորս քայլով.

- հեքիաթի ընթերցում՝ բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,
- հեքիաթի երևակայական կողմի բացահայտում,
- հեքիաթի բարոյախոսական իմաստի, դաստիարակչական արժեքի վերհանում,
- հեքիաթի լեզվի և ոճի վերլուծություն:

Յուրաքանչյուր հեքիաթ ունի դաստիարակչական հզոր արժեք և բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Աննկարագրելիորեն մեծ է երեխայի հոգու, զգացմունքների և համոզմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը: Ինչպես հանրաճանաչ իտալացի գրող Ջանի Ռոդարին է նշում, հեքիաթը երեխային պետք է կողմնորոշվելու, իրեն ուսումնասիրելու, իր հնարավորությունները չափելու, գնահատելու համար [6]:

Հեքիաթը միաժամանակ տեղծագործական ունակությունների, բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Անսահման մեծ է հեքիաթների ինչպես դաստիարակչական, այնպես էլ պատմաճանաչողական և գրական-գեղարվեստական արժեքն ու նշանակությունը:

Հեքիաթները ժողովրդի համար միայն ժամանցի առարկա չեն եղել, որոնցով կարելի էր կարճել ձմռան երկար ու ձանձրալի գիշերները, փարատել ցերեկվա ծանր առօրյայի ճնշիչ տպավորությունը: Հեքիաթները կատարել են հասարակական լայն զանգվածների լավագույն ձգտումների ու իղձերի յուրահատուկ հաղորդիչի դերը, ամրապնդել են նրանց նվիրական ավանդները իրար հաջորդող սերունդների գիտակցության մեջ: Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգևորումները, որոնք մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար, արտահայտել իր մտորումները, որոնել է իր կրած տառապանքների պատճառները, պայքարի կոչ է արել ամեն տիպի բռնության, ճնշման, անարդարության ու շահագործման դեմ:

Մարդիկ դարեր շարունակ ոգևորվել են հեքիաթների հերոսների խիզախության, անվեհերության, խելքի ու հնարամտության հիանալի օրինակներով,

դժվարությունները հաղթահարելու մեծ կամքով, չքավորներին ու ընկածներին զորավիգ կանգնելու ազնիվ ձգտումով, արդարությունը պաշտպանելու և ճշմարտությանը հասնելու անձնազոհ պատրաստակամությամբ, ջանադիր աշխատասիրությամբ, հավատարմությամբ և անձնազոհությամբ: Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերի հետ միասին հեքիաթները հարուստ նյութ են տալիս ժողովրդի հոգեբանությունը, նրա իղձերն ու ակնկալությունները, նրա բուն պատմությունը ուսումնասիրելու համար: Հեքիաթների լավագույն նմուշները այսօր էլ չեն կորցրել իրենց հմայքն ու ուժը և գեղարվեստական մեծ բավականություն են պատճառում մարդկանց: Նրանք ունեն յուրահատուկ նշանակություն այնքանով, որքանով որ բանաստեղծական բարձր ձևերի մեջ կերպավորում են ժողովրդի դարավոր մտքերն ու զգացմունքները, մարդկության անկրկնելի մանկությունը: Վերջապես, հեքիաթները կարող են լինել կարևոր կրթական գործիք: Ծնողները և ուսուցիչները կարող են օգտագործել պատմություններ՝ քննարկելու այնպիսի կարևոր թեմաներ, ինչպիսիք են բարեկամությունը, արդարությունը և պատասխանատվությունը: Հեքիաթները կարող են ելակետ ծառայել բարոյական երկընտրանքների և էթիկական հարցերի շուրջ քննարկումների համար:

Ինչ վերաբերում է հեքիաթների ուսուցման մեթոդներին, ապա դրանցից կարելի է առանձնացնել ու մատնանշել «Ուղղորդվող (կամ ընդհատումներով) ընթերցանության» մեթոդը, որը հնարավորություն է տալիս երեխաների մեջ հետաքրքրություն արթնացնել ընթերցանության բուն գործընթացի նկատմամբ:

«Ուղղորդվող ընթերցանության» մեթոդի հիմքում ընկած է ընթերցանության գործընթացի դիտարկումը: Ի վերջո, ինչպե՞ս են կարդում հմուտ, ընթերցողական կուլտուրային տիրապետող մարդիկ: Կարդում են տեքստի մի հատված, դադար են տալիս մտքում ծանրութեթև անելու, իրենք իրենց հարցեր տալու, պատասխաններ որոնելու, շարունակության մասին կանխատեսումներ անելու նպատակով [7]:

Հեքիաթների սյուժեն ունի մի հիմնական գիծ՝ չարի և բարու պայքար, որի արդյունքում միշտ հաղթում է բարին: Այս ամենը, կարելի է ասել, ձևավորում է երեխաների արժեհամակարգը: Պետք է միշտ հիշել, որ երեխաները ունեն շատ նուրբ հոգի և զգացմունքներ, նրանց համար դժվար է հասկանալ ու ընդունել իրականությունը:

Այսպիսով, հեքիաթը յուրաքանչյուր փոքրիկի լիարժեք զարգացման ամենամատչելի տարբերակներից մեկն է: Այդպես եղել է, կա ու կլինի: Պետք չէ թերագնահատել հեքիաթի դերը երեխայի կյանքում: Ճիշտ ընտրած հեքիաթը դրական ազդեցություն կթողնի երեխայի հուզական ներաշխարհի վրա, կուղղի և կլավացնի նրա պահվածքը, ինչպես նաև կզարգացնի սեփական անձի և ուժերի նկատմամբ հավատը:

Հեքիաթները նաև օգնում են երեխաներին հասկանալ բարոյական արժեքները և բարոյական դասերը: Շատ հեքիաթներ պարունակում են խորը բարոյական պատգամներ, որոնք երեխաներին սովորեցնում են բարություն, ազնվություն, աշխատասիրություն և այլ կարևոր արժեքներ: Օրինակ՝ «Կարմիր գլխարկը» հեքիաթը կարող է զգուշություն և խնայողություն սովորեցնել, իսկ «Անհաղթ աքլորը»՝ համեստություն և հարգանք ուրիշների հանդեպ:Հեքիաթի տեխնոլոգիայի կիարռումը տարրական դպրոցում բազում մանկավարժական խնդիրների լուծման արդյունավետ միջոց է: Հեքիաթ հորինելու, բեմադրելու, ձևավորելու, նկարելու ժամանակ զարգանում են երեխայի ստեղծագործական կարողությունները, ինչը շատ կարևորվում է արդի պայմաններում: Բացի այդ, հեքիաթներն օգնում են զարգացնել վերլուծական և քննադատական մտածողության հմտությունները: Երեխաները սովորում են բացահայտել սյուժեի հիմնական իրադարձությունները, վերլուծել հերոսներին և նրանց դրդապատճառները և եզրակացություններ անել տարբեր գործողությունների հետևանքների մասին: Այսպիսով, այս տեխնոլոգիան հնարավորություն է տալիս բացահայտելու և զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ստեղծագործական կարողությունները, ներքին հնրավորությունները: Զարգանում է աշակերտի մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործականությունը, խոսքը: Հեքիաթի տեխնոլոգիայում երեխան ակտիվ գործող անձ է աշխատանքի ողջ ընթացքում: Հեքիաթները նաև օգնում են երեխաներին զարգացնել իրենց լեզվական հմտությունները: Հեքիաթներ կարդալն օգնում է ընդլայնել բառապաշարը, բարելավել տեքստի ըմբռնումը և զարգացնել կարդալու հմտությունները: Երեխաները, ովքեր պարբերաբար լսում և կարդում են հեքիաթներ, ավելի հավանական է, որ տիրապետեն գրելու և տեքստի վերլուծության հմտություններին:Շփվելով, համագործակցելով դասընկերների հետ՝ աշակերտները հնարավորություն են ունենում գտնելու իրենց հուզող տարբեր

հարցերի պատասխաններ, կարողանում են բացահայտումներ անել, մտածում են՝ ինչ կարող են իրենց մեջ փոխել, կատարելագործել: Երեխան կարողանում է հասկանալ, ճանաչել իրեն շրջապատող աշխարհը, իսկ ճանաչելով նա կկարողանա նաև իր ուրույն տեղը գտնել իրականության մեջ:

Հեքիաթի դասավանդման աշխատանքն ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության կամ սյուժեի հաղորդում և հեքիաթային կամ երևակայական կողմի բացահայտում: Սրանք երկուսն էլ խիստ կարևոր ու անհրաժեշտ են նյութի յուրացման ու նրանից բխող կրթական ու դաստիարակչական նպատակների իրականացման համար և երբեք չեն կարող փոխարինել միմյանց:

Տարրական դասարաններում հեքիաթն ամենից առաջ պետք է դասավանդել որպես գեղարվեստական ստեղծագործություն: Երբ հեքիաթի բնագիրը բազմակողմանիորեն մշակված ու յուրացված կլինի, այն ժամանակ միայն կարելի է անցնել հեքիաթի երևակայական կողմի բացահայտմանը: Աշակերտների առաջ պետք է բաց անել հեքիաթի հեքիաթային քողը, ցույց տալ նրանում եղած իրականն ու անիրականը, ճշմարտապատումն ու երևակայականը՝ այդ ամենը, իհարկե, կատարելով կոնկրետ նյութի հիման վրա, պարզ ու մատչելի ձևով, որպեսզի երեխաները տեսական բացատրությունները կապեն գործնականի հետ, յուրաքանչյուր բառ ու հասկացություն իմաստավորեն կոնկրետ բովանդակությամբ:

Տարրական դասարաններում հաճախ կիրառվում է հեքիաթի ուսուցման հետևյալ մեթոդը: Երեխաներն ինչ-որ չափով ծանոթանում են ուսուցանվող հեքիաթին, արդեն կարդացած են լինում այն: Նրանց տրվում են հեքիաթի յուրաքանչյուր դրվագին համապատասխանող առանձին նախադասություններ, որոնք պետք է դասավորել ճիշտ և տրամաբանված հերթականությամբ:

Աշակերտների երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստում են նաև հեքիաթների հերոսներին նկարելը, նրանց գործունեությունը այդ կերպ ներկայացնելը և իրենց նկարածը վերլուծելը ու դատողական խոսք կառուցելը: Այսպիսով, վերևում ասվածը հաստատում է հեքիաթի ուսուցման կարևորությունը կրտսեր դպրոցականի ստեղծագործական կարողությունների զարգացման գործում, նրա անձի տարբեր կողմերի ձևավորման և զարգացման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ներկայացված աշխատանքը՝ կարող ենք ընդգծել հետևյալը.

- Հեքիաթի ուսումնասիրումը նպաստում է կրտսեր դպրոցականի երևակայության խթանմանը, հետաքրքրասիրության ձևավորմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և ընթերցասիրության մշակմանը, եթե գործընթացն իրականացվում է նպատակադրված մեթոդական շղթայով:
- Հեքիաթի ուսումնասիրման միջոցով աշակերտների բառապաշարը, կապակցված խոսքը և երևակայությունը զարգանում են, եթե ուսումնասիրման գործընթացն իրականացվում է համագործակցային ճանապարհով՝ կիրառելով փոխգործուն մեթոդներ:
- Հեքիաթի տեխնոլոգիան նպաստում է աշակերտների սոցիալականցմանը՝ ավելացնելով սոցիալական և անձնական փորձը: Այս տեխնոլոգիայի միջոցով մենք հնարավորություն ենք տալիս աշակերտներին ինքնաիրացման, ինքնարտահայտման և, իհարկե, նորը ստեղծելու, քանզի յուրաքանչյուր աշխատանքում երեխան ամբողջությամբ արտահայտում է ինքն իրեն, իր աշխարհընկալումը, կյանքի երևույթների իր ըմբռնումը և գնահատումը:
- Հեքիաթների միջոցով կարելի է երեխայի մեջ բնավորության, գործելակերպի դրական հատկանիշներ դաստիարակել: Կարևորվում է բարությունը, մարդկանց օգնելու պատրաստակամությունը, սերը, կարեկցանքը: Հեքիաթների հրաշք աշխարհը գրավում է երեխաներին և այն, ինչ որ նրանք չեն կարող տեսնել իրականության մեջ, տեսնում են այդ գեղեցիկ աշխարհում: Հեքիաթներն ունեն կրթիչ և դաստիարակիչ ուժ, ուստի հեքիաթը թույլ է տալիս դաստիարակել՝ դրականի վրա հենվելով:
- Հեքիաթներն անբաժանելի դեր են խաղում տարրական դպրոցի երեխաների կյանքում: Դրանք նպաստում են լեզվական հմտությունների զարգացմանը, բարոյական արժեքների ձևավորմանը, խթանում են

երևակայությունը և ամրացնում կապը երեխաների և մեծահասակների միջև: Ուստի հեքիաթների ընդգրկումը կրթական գործընթացում կարևոր քայլ է երիտասարդ մտքի և անհատականության զարգացման գործում:

- Հեքիաթը կառուցում է բարոյական արժեքներ:Հեքիաթները հաճախ ներառում են բարոյական դասեր և էթիկական երկընտրանքներ: Նրանք օգնում են երեխաներին հասկանալ լավի և վատի տարբերությունը, սովորեցնել բարություն, արդարություն և պատասխանատվություն: Այս բարոյական դասերը կարող են հատկապես կարևոր լինել ուսումնական գործընթացում՝ օգնելով ձևավորել ուսանողների բնավորությունը:
- Հեքիաթը նպաստում է մշակութային ժառանգության իմացության գործում: Հեքիաթները հաճախ տարբեր ժողովուրդների մշակութային ժառանգության մաս են կազմում: Հեքիաթների ուսումնասիրությունն օգնում է երեխաներին սովորել աշխարհի տարբեր մշակույթների, ավանդույթների և սովորույթների մասին: Սա նպաստում է նրանց մշակութային կրթությանը և կոսմոպոլիտ հայացքների զարգացմանը:
- Սոցիալական ուսուցում և հաղորդակցման հմտություններ դասարանում պատմությունների քննարկումը կարող է հիանալի հնարավորություն լինել հաղորդակցման և սոցիալական հմտությունները զարգացնելու համար: Երեխաները սովորում են լսել միմյանց, արտահայտել իրենց կարծիքը, վերլուծել և քննարկել տեքստերը: Սա օգնում է նրանց զարգացնել հաղորդակցման հմտություններ, որոնք օգտակար կլինեն նրանց ապագայում, ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքում:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, «Մանկավարժ», 2005:
2. Սահակյան Ա., հեքիաթը ստեղծագործական կարողությունները խթանող մանկավարժական տեխնոլոգիա, Բանբեր, ԵՐԵՎԱՆ – 2017:
3. Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995:
4. Сухомлинский В. А. пед.соч.-М., 1979.-Т.1-С.183.
5. Запарожец А. В. Психология восприятия сказки ребенкомдошкольником. «Дошкольное воспитание». М., 1977, с. 23.
6. Сухомлинский В.А., Наша добрая семья //ЦГА Украины, с. 48.
7. Вачков И. В. Сказкатерапия. Развитие самосознания через психологическую сказку: Учебное пособие 3-е изд., перераб. и доп.- М.: Ось-89, 2007, с.144.